

Բարձր թույլատվությամբ համակարգչային շերտագրման հետազոտության գործելակարգ

Ընդհանուր դրույթներ

Տվյալ գործելակարգն ուղղորդում է ճառագայթային ախտորոշման մասնագետներին հստակ որոշելու թոքերի բարձր թույլատվությամբ ՀՇ հետազոտության ցուցումները և իրականացման ձևաչափը: Փաստաթղթի նպատակն է բարելավել բարձր թույլատվությամբ ՀՇ հետազոտության միջոցով տարբեր ախտաբանական վիճակների ախտորոշումը: Փաստաթուղթը մշակվել է Ռադիոլոգների հայկական ասոցիացիայի կողմից: Փաստաթղթի հիմք են հադիսացել Ամերիկյան ռադիոլոգիայի քոլեջի (American Collage of Radiology) կողմից մշակված և կիրառվող պրոտոկոլները թոքերի՝ բարձր թույլատվությամբ ՀՇ հետազոտության միջոցով հայտնաբերվող տարբեր ախտահարումների համար: Աշխատանքային խմբում մշակման արդյունքում որոշ չափորոշիչներ հարմարեցվել են հայկական համակարգի համար: Տեղայնացման/ադապտացիայի աշխատանքները կատարվել են ADAPTE մեթոդաբանության հիման վրա: Գործելակարգի բոլոր դրույթները քննարկվել և հավանության են արժանացել ՌՀԱ կողմից: Փաստաթուղթը նախատեսված է ճառագայթային ախտորոշման մասնագետների համար: Այն ենթակա է պարբերական թարմացումների և/կամ խմբագրման յուրաքանչյուր 5 տարին մեկ կամ ավելի հաճախակի՝ կախված տվյալ ոլորտում նոր գիտագործնական տեղեկատվության ի հայտ գալուց:

Այս գործելակարգը նախատեսված է աջակցելու ՀՇ կատարող պրակտիկ մասնագետներին: Երբեմն հնարավոր է լրացուցիչ և/կամ մասնագիտացված հետազոտության (մեկ այլ մեթոդով) անհրաժեշտություն լինի: Թեև հնարավոր չէ հայտնաբերել յուրաքանչյուր շեղում, այնուամենայնիվ այս գործելակարգին հետևելը առավելագույնի կհասցնի թոքերում հանդիպող ախտաբանությունների մեծ մասի հայտնաբերման հավանականությունը:

Պատասխանատու համակարգող

